ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հուլիսի 2026 թվականի №Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԳԻՇՏԻ ՓՈՂՈՑԻ 15 ԵՎ 17 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Արգիշտի փողոցի 15 և 17 հասցեների բազմաբնակարան շենքերի (այսուհետ՝ Բազմաբնակարան շենքեր) մի խումբ բնակիչների կողմից 2026 թվականի հունվարի 29-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված դիմումը, որով վերջիններս խնդրել են իրենց դարձնել Ընկերության բաժանորդ, և նշել, որ Բազմաբնակարան շենքերում բնակվում են շուրջ 11 տարի,

բ) Բազմաբնակարան շենքերի բնակիչների կողմից 2026 թվականի հունիսի 12-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված գրությունն առ այն, որ Բազմաբնակարան շենքերի կառուցապատող «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությունը ԵԿԴ/0078/04/15 դատական ակտով ճանաչվել է սնանկ,

գ) Ընկերության 2026 թվականի փետրվարի 13-ի Ե-562-26 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերն էլեկտրամատակարարմամբ ապահովելու համար շենքերի կառուցապատողը Ընկերություն չի դիմել,

գ) Ընկերության 2026 թվականի հունիսի 25-ի №Ե-2414-26 և Բազմաբնակարան շենքերի մի խումբ բնակիչների հուլիսի 6-ի գրությունները, համաձայն որոնց՝ վերջիններս

չեն առարկում Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 156-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման համար Կանոնների 159-րդ կետով սահմանված հայտը կարող է ներկայացնել, Ընկերության հետ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագրեր) կնքել Բազմաբնակարան շենքերի կողմից լիազորված անձը (այսուհետ՝ Լիազորված անձ).
2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հայտն ստանալուց հետո Կանոնների 162-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում Ընկերությունը Լիազորված անձին ներկայացնում է Պայմանագիր կնքելու առաջարկ.
3) Պայմանագիրը կնքված է համարվում Բաշխողի կողմից Լիազորված անձին Պայմանագիր կնքելու առաջարկը պատշաճ ներկայացնելու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրով սահմանված միացման վճարը (28 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն) վճարելու պահից.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև Բազմաբնակարան շենքերն էլեկտրամատակարարմամբ ապահովման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 360 աշխատանքային օրը.
5) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, Պայմանագրերով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով: Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերի՝ բաշխման ցանցին

միացումից հետո Ընկերություն ներկայացված ակցեպտների հիման վրա Բազմաբնակարան շենքերի բնակիչները ձևակերպվում են՝ որպես Ընկերության բաժանորդներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Բազմաբնակարան շենքերի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
հուլիսի 2026թ.